«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2016 թվականի

Ուսանողական խորհրդի հաշվետվությունն ուսանողների ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, հայրենասիրական դաստիարակության աշխատանքների մասին

Լսելով և քննարկելով **«Ուսանողական խորհրդի հաշվետվությունն ուսանողների ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, հայրենասիրական դաստիարակության աշխատանքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ Ս.Ա.Խառատյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. 2016 թվականին ուսանողական խորհուրդը շարունակել է աշխատանքները՝ հավատարիմ մնալով իր որդեգրած սկզբունքներին: Ինչպես գործունեության ողջ ընթացքում, այս տարի ևս ուսանողական խորհրդի գերակա խնդիրը շարունակել է մնալ ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությունը:

Անցած մեկ տարվա ընթացքում ուսանողական խորհուրդն արձանագրել է բազում ձեռքբերումներ ու հաջողություններ: 2016 թվականին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կազմակերպած «Հայկյան» մրցանակաբաշխությանը, որին ներկա է եղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողական խորհուրդը հինգերորդ տարին անընդմեջ հաղթող է ճանաչվել «Լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգում և արժանացել «Հայկյան» մրցանակի:

Անցնող տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը շարունակել է ծավալել ակտիվ գործունեություն. բազմաթիվ ուսանողներից շարունակել է ստանալ տարաբնույթ դիմումներ և նամակներ, որոնց հանդեպ ցուցաբերվել է անհատական մոտեցում: Որևէ դիմում կամ նամակ անուշադրության չի մատնվել: Դրանք բոլորն էլ ներկայացվել են իրավասու մարմիններին և անմիջապես ստացել համապատասխան ընթացք և կարգավորում:

Տարին արգասաբեր էր նաև սպորտի բնագավառում: ՀՊՏՀ ֆուտզալի հավաքականը դարձել է Հայաստանի ֆուտզալի բարձրագույն խմբի առաջնության կրկնակի չեմպիոն, ինչի առթիվ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ նկարահանվել է ֆուտզալի թիմի և նրանց նվաճած հաղթանակի կերտման մասին պատմող «Չեմպիոնական ճանապարհ» տեսաֆիլմը:

Ուսանողական խորհուրդը մշտապես իրականացնում է սոցիալական տարբեր ծրագրեր՝ կանոնավոր կերպով այցելում է սոցիալական տարբեր հաստատություններ՝ մանկատներ, ծերանոցներ. աջակցություն է ցուցաբերում սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին:

Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և միջնորդությամբ բուհի շուրջ 150 ուսանողներ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, Հայ օգնության ֆոնդի և այլ հիմնադրամների կողմից այս տարի արժանացել են ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման:

Հունվարի 31-ին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ իրականացվել է այցելություն Վանաձորի մանկատուն: Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ուսանողական խորհրդի կողմից մանկատունը ստացել է բազմաթիվ նվերներ, իսկ երեխաների համար պատրաստվել էր հետաքրքիր անակնկալներով, ուրախ երգ ու պարով լի շոու-ծրագիր՝ նպատակ ունենալով փոքրիկ տոն պարգևել դրա կարիքն այդքան զգացող փոքրիկներին:

Ուսանողների գիտելիքների պաշարը նոր և ավելի գործնական գիտելիքներով համալրելու, մասնագիտական կարողություններն ու հմտությունները զարգացնելու նպատակով անցնող տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը շարունակել է իրականացնել բազմաթիվ գիտակրթական միջոցառումներ: Դրանցից առավել ուշագրավ է մայիսին Ծաղկաձորում կազմակերպված եռօրյա «Level up» միջազգային ուսանողական գիտաժողովը, որին մասնակցում էին աշխարհի 7 երկրների 14 համալսարանների ավելի քան 100 ուսանողներ:

Գիտաժողովը կրում էր «Համաշխարհային տնտեսական մարտահրավերներ» խորագիրը: 3 տարբեր բաժանմունքներում ընդգրկված գիտական հոդվածները նվիրված էին համաշխարհային տնտեսության արդի խնդիրներին ու մարտահրավերներին և Հայաստանի մասնակցությանը միջազգային տնտեսական հարաբերություններին: Գիտաժողովի երրորդ օրը ուսանողներին հյուրընկալվել է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ով ներկա է գտնվել «Տնտեսական և ռազմական շահերի բախումը՝ որպես համաշխարհային մարտահրավեր» և «Ռոբոտատեխնիկան ՀՀ ռազմարդյունաբերության մեջ և որպես Հայաստանի բրենդի զարգացման ուղղություն» խորագրերով զեկուցումների ներկայացմանը:

Ուշագրավ են նաև բուհի միջազգային ծրագրերի իրականացման կենտրոնում կազմակերպված «Compass» և «Progress» միջբուհական ուսանողական աշխատաժողովները, որոնք իրենց շուրջ են համախմբել Հայաստանյան տարբեր բուհերի շուրջ 300 ուսանողների, որոնք ընտրվել էին մասնակցության հայտ լրացրած ավելի քան 1500 ուսանողներից: Աշխատաժողովների ընթացքում տարբեր ոլորտների առաջնակարգ մասնագետների և պետական կառույցների ներկայացուցիչների միջոցով ուսանողներին են փոխանցվել նոր գիտելիքներ ու փորձ՝ զարգացնելով մասնագիտական նոր կարողություններ և հմտություններ:

Անցնող տարվա ընթացքում ուսանողական խորհրդի ջանքերով բուհում հյուրընկալվել են Ռուսաստանի Դաշնության համար մեկ մարքեթոլոգ Իգոր Մաննը, Ռազմավարական բիզնես կրթական-խորհրդատվական կենտրոնի հիմնադիր Գրիգոր Առաքելյանը, տարբեր բանկերի, ֆինանսավարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների բարձրակարգ մասնագետներ: «Երևանի արտաքին գովազդի փառատոն 2016»-ի հետ համագործակցության շրջանակներում բուհի մեծ դահլիճում գովազդի և նորարարության վերաբերյալ վարպետության դասով հանդես են եկել «Zeno Group» ընկերության արտ-տնօրեն Մելանի Քլենսին և «Filmmaster» ընկերության արտ-տնօրեն Սաադի Ալկուաթլին:

Ուսանողական խորհրդի արտաքին կապերի հանձնաժողովի ջանքերով բուհի հարյուրավոր ուսանողներ ողջ տարվա ընթացքում հնարավորություն են ունեցել այցելելու տարբեր արտադրական ձեռնարկություններ, այդ թվում՝ «Բեկոն» մսամթերքի կոմբինատ, «Coca-Cola» զովացուցիչ ըմպելիքների, ինչպես նաև «Կիլիկիա» գարեջրի գործարաններ, և տեղում ծանոթանալու արտադրության կազմակերպման գործընթացին:

Այս տարի իրականություն դարձավ ուսանողական խորհրդի հերթական հետաքրքիր նախաձեռնությունը՝ «Լավագույն ուսանող 2016» մրցանակաբաշխությունը, որն իրականացվեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ համատեղ նոյեմբերի 15-ին: Տոնական միջոցառմանը ներկա էին և պարգևները ուսանողներին հանձնեցին բուհի ռեկտոր Կորյուն Աթոյանը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի համաարգող Կարեն Ավագյանը, պրոռեկտոր Սևակ Խաչատրյանը և ՀՊՏՀ ուսանողական խորհրդի նախագահ Սերգեյ Խաառատյանը: 2015-2016 ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն, ինչպես նաև հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներն արժանացան «Լավագույն ուսանող» հուշամեդալի և պատվոգրի: Միջոցառումն ամփոփվեց «Հատուկ մրցանակի» հանձնման արարողությամբ: Այս անվանակարգին արժանացավ քառօրյա պատերազմի մասնակից, Մարտական խաչ երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ, համալսարանի կառավարման ֆակուլտետի ուսանող Հարություն Բադալյանը:

Առանձնակի ուշադրության է արժանի ուսանողական խորհրդի կողմից իրականացվող լրատվական և տեղեկատվական գործունեությունը: Հայաստանյան իրականության մեջ նախադեպը չունեցող Առաջին ուսանողական հեռուստաալիքը, շատ կարճ ժամանակում ճանաչվելով և սիրվելով հազարավոր մարդկանց կողմից, այժմ ունի բավական մեծ լսարան. բացի իրականացվող ծրագրերի և միջոցառումների լուսաբանումից, այն շարունակում է ընդլայնել իր գործունեության շրջանակը: Այսօր արդեն իրականացնում է մի շարք հետաքրքիր ու բազմաբովանդակ նախագծեր, ինչպիսիք են «Բաց երկխոսություն», «Economix», «Ընթերցասեր» հաղորդաշարերը, յուրաքանչյուր ամսվա իրադարձություններն ամփոփող լուրերի թողարկումները, տարբեր առիթներով նկարահանվող բազմաթիվ հոլովակները, ինչպես

նաև վերջերս կյանքի կոչված ուղիղ հեռարձակումը, որը աննախադեպ հնարավորություն է ընձեռում ուսանողներին առցանց հետևելու ուսանողական խորհրդի կողմից իրականացվող միջբուհական-ուսանողական աշխատաժողովների և այլ միջոցառումների ամբողջ ընթացքին: Ողջ տարվա ընթացքում շարունակել է գործել նաև ուսանողական խորհրդի պաշտոնական կայքը, որը շարունակաբար ընթերցողներին է ներկայացրել առավել ընդհանրական և մանրամասն տեղեկատվություն կատարվող աշխատանքների մասին: Լրատվական գործունեության մեջ իր ուրույն տեղն ունի նաև ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան պաշտոնական էջը, որի հետևորդների թիվը այս պահին հասնում է 10.700-ի:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի ուսանողական խորհրդի կողմից իրականացվող ռազմահայրենասիրական գործունեությունը: Սեպտեմբերի 10-ին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ բուհում բացվել է քառօրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված լսարան, որի բացման հանդիսավոր արարողությանը ներկա էր ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Ուսանողական խորհրդի և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի նախաձեռնությամբ Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանում գտնվող Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգու տարածքում մայիսի 31-ին իրականացվել է քառօրյա պատերազմում զոհված մերօրյա հերոսներին նվիրված հուշաքարի բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա էր նաև ՀՀ վարչապետ, ՀՊՏՀ խորհդի նախագահ Հովիկ Աբրահամյանը: Հուշաքարը իրենից ներկայացնում է խաչի ու թրի միաձուլում և խորհրդանշում հայրենիքի պաշտպանության համար զոհված հերոս հայորդիներին, իսկ քանդակի հեղինակը ժողովրդական վարպետ Վարազդատ Համբարձումյանն է:

Ողջ տարվա ընթացքում արդեն ավանդույթ դարձած «Ուսանողներն առաջնագծում» ծրագրի շրջանակներում այցելությունները ՀՀ ՊՆ տարբեր մարտական զորամասեր, սահմանամերձ գոտիներ և պաշտպանական տեղամասեր կրել են պարբերական բնույթ: Այցելությունների ժամանակ զորամասերը նվեր են ստացել հեռուստացույցներ, տասնյակ հեռադիտակներ, հատուկ նշանակության տարբեր պարագաներ, քաղցրավենիք, ծխախոտ և այլ նվերներ:

2016 թ. ընթացքում բուհի շուրջ 100 ուսանողներ ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ բազմաթիվ անգամներ եղել են «Բաղրամյան» զորավարժարանում, ՊՆ հրթիռահրետանային բրիգադում, հաղթահարել հոգեբանական արգելագոտին, բարելավել կրակային պատրաստվածության ցուցանիշները, ինչպես նաև արժանացել խրախուսական պատվոգրի՝ բուհ-բանակ կապի ամրապնդման նպատակով անձնվեր գործունեության իրականացման և բանակին մշտապես աջակցություն ցուցաբերելու համար:

Հատկապես ուշագրավ է ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին ուսանողական խորհրդի ծավալած գործունեությունը: Այս կառույցի ջանքերով բուհում անմիջապես ստեղծվել է ուսանողական հատուկ շտաբ, որն առանց ժամանակ կորցնելու սկսել է ակտիվ գործունեություն ծավալել մարտնչող Արցախին օգնություն ցուցաբերելու նպատակով: Իրադրության լարման առաջին իսկ օրվանից մեր համալսարանի մի խումբ ուսանողներ, ՈՒԽ նախագահ Սերգեյ Խառատյանի գլխավորությամբ, ուղևորվել էին ԼՂՀ սահմանային պաշտպանական շրջան՝ սատար կանգնելու տեղի բնակչությանը և տեղում ծանոթանալու առկա խնդիրներին: Մի քանի օր շարունակ կազմակերպվել է առաջին բուժօգնության պարագաների, սննդի, ծխախոտի, գուլպաների, տաք ծածկոցների և այլ առաջին անհրաժեշտության իրերի հավաքում, որոնք առաքվել են ԼՂՀ սահմանային շրջաններ:

Տարիներ շարունակ ձևավորված ավանդույթի համաձայն՝ այս տարի ևս ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ սեպտեմբերի 21-ի օրամուտը համալսարանի շուրջ 100 ուսանողներ դիմավորել են «Եռաբլուր» փառքի պանթեոնում:

Հագեցած է եղել նաև ուսանողների մարզամշակութային կյանքը: Արդեն ավանդական դարձած «Ուսանողական գարուն», «Ուսանողական ամառ» և «Ուսանողական աշուն» մարզամշակութային փառատոներին մասնակցել են բուհի հազարավոր ուսանողներ՝ փորձելով իրենց

ուժերը մի շարք մարզաձևերում, ինչպես նաև հանդես գալով երգի, պարի և բոլորի կողմից սիրված և սպասված Ուրախների և հնարամիտների ակումբի ելույթներով:

Ուսանողական խորհրդի գործունեության դաշտից չի վրիպել նաև ուսանողների հանգստի և ազատ ժամանցի կազմակերպումը: Համալսարանի հարյուրավոր ուսանողներ իրենց ամառային հանգիստն են անցկացրել Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում, իսկ ձմեռային հանգստի մի մասը՝ ձյունառատ ու հրաշագեղ Ծաղկաձորում: Կազմակերպվել են բազմաթիվ ճանաչողական արշավներ դեպի պատմամշակութային վայրեր, ինչպես նաև բազմաբնույթ ժամանցային ծրագրեր ու միջոցառումներ, իսկ ազգային-հայրենասիրական երգն ու պարը ՀՊՏՀ բակից անպակաս են դարձել:

Նշված բոլոր միջոցառումները հնարավոր է իրականացնել միայն նախաձեռնող, ակտիվ ու պատրաստակամ ուսանողների անսահման նվիրումի, ինչպես նաև համալսարանի ռեկտոր Կորյուն Աթոյանի, ՀՀԿ երիտասարդական կազմակերպության և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի մշտական աջակցության շնորհիվ:

Ուսանողական խորհուրդը շարունակելու է իր աշխատանքները՝ նպատակ ունենալով պաշտպանել ուսանողների իրավունքները և շահերը, բարձրացնել կրթության որակը, համալրել ուսանողների մասնագիտական գիտելիքների պաշարը, ինչպես նաև ապահովել նրանց հետաքրքիր, ակտիվ ու հագեցած ուսանողական կյանքը:

Ելնելով վերոնշյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Ուսանողական խորհրդի կատարած աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Առաջարկել ուսանողական խորհրդին՝**

   1) սերտորեն համագործակցել ռեկտորատի, դեկանատների և ամբիոնների հետ ուսումնագիտական և ուսումնադաստիարակչական աշխատանքներում.
   2) ակտիվացնել համագործակցությունը արտերկրի համանման երիտասարդական կազմակերպությունների հետ.
   3) համագործակցել համալսարանի հենակետային ավագ դպրոցների և ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի հետ.
   4) ուսանողության շրջանում պարբերաբար անցկացնել սոցիոլոգիական հարցումներ և արդյունքները ներկայացնել ռեկտորատի քննարկմանը.
   5) ավելի մեծ ուշադրություն դարձնել սոցիալապես խոցելի խմբերի ուսանողներին ցուցաբերվող աջակցությանը.
   6) ձեռնարկել միջոցառումներ ուսանողների կարգապահության ամրապնդման ուղղությամբ.
   7) ակտիվորեն համագործակցել Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի ուսանողական խորհուրդների հետ.

3. **Սույն որոշման կատարման նկատմամբ պատասխանատվությունը վերապահել ուսանողական խորհրդի նախագահ Ս.Ա. Խառատյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

21.12.2016 թ.